



# ԱԶԱՏ ՕՐ



ԱԶԳԱՅԻՆ • ԲԱՆԱԲԱԿԱՆ • ԳՐԱԿԱՆ • ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

## «AZAT OP» ARMENIKH HMEPHCIIA EΦHMEPIAΔ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 30 ՄԱՅԻՍ 1994 50ԹԻ ՏԱՐԻ ԹԻԻ 15-002

ΔΕΥΤΕΡΑ 30 ΜΑΙΟΥ 1994 ΕΤΟΣ 50ο αριθ. φύλλου 15.002

### 28 ՄԱՅԻՍ 1918 – ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁ

#### ՄԱՅԻՍ 28 ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԵԼՈՅԹՆԵՐ

28 Մայիս 1918ի՝ Հայաստանի Հանրապետության ստեղծման 76րդ տարեդարձը յատկանշական եղյայներով նշուեցավ Արևելի մէջ, յուզումի ընդհանուր մթնոլորտի մը մէջ պահելով յանահայութիւնը: Այս պատմական ուրախ րուականին առիթով՝

▶ ՀՀ Արևելի դեպատմատան մէջ տեղի ունեցաւ հիւրաւորութիւն, Մայիս 28ըն ազգային ու պետական պաշտօնական օր հռչակուելուն առիթով:

▶ Արևելի կեդրոնական քաղաքարահներէն մէկուն մէջ, Համագայիկի շրջ վարչութեան նախաձեռնութեամբ կազմակերպուեցաւ հրապարակային հանդիսութիւն, որուն պատշաճ յայտագրով, որո ընթացքին բանախօսեց Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ ընկեր Բենո Թունդեան:

▶ Ֆիւսի Հ. Յ. Գ. կուսիակի կազմ գեղարուեստական նոյս յայտագրով ու խննդով ժողովուրդը մասնակից եղաւ օրուն ինաստի:

▶ Գոմիսիոյ Հ. Յ. Գ. կուսիակի նախաձեռնութեամբ ու իրախնամեով երիտասարդութիւն ու ժողովուրդ մասնակցեցան օրուն խորհուրդին, յեղափոխական երգերով ու պարերով:

▶ Հ. Յ. Գ. երիտասարդական միութեան «Մոզմոն Թեւիլթեան» խումբին կողմ իրախնամեով եղյայ մը շարք երկուցեան, որո ընթացքին գործադրուած է օրուն պատշաճ յայտագիր: Յաջորդ օրը, կիրակի առաւօտեան՝ գոնարանական ազօրէ սուրբ Աստուածածին եկեղեցոյ մէջ:

▶ «Ազատ Օր» Մայիս 28ին նուիրում 8 էջոնց գունատր բացառիկ քիւ մը հրատարակեց:

▶ Իսկ այսօր՝ Մայիս 28ի առիթով եւ Հ. Մ. Ը. Մի շրջ վարչութեան նախաձեռնութեամբ միջ - մասնաճիւղային ոտնակնդակի մրցում մը տեղի կ'ունենայ Կիւլայի մարզադաշտին վրայ, հայ փոքր ու երէց մարզիկներու միջեւ:

#### ԸՆԿԵՐ ԲԵՆՕ ԹՈՆԴԵԱՆԻ ԽՕՍԻԸ

Համագայիկի հրաւերով Մայիս 28ի 76րդ տարեդարձի տօնակատարութեան բանախօսելու հրաւիրուած էր Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ ընկեր Բենո Թունդեան: Ընկերոջ խօսքը կը հրատարակենք երկու յաջորդական բաժնիներով՝ այսօր եւ վաղը:

Աւելի քան 70 տարի, Մայիս 28ի տարեդարձերուն առիթով եւաւտեցանք այս սրահներուն մէջ, միասնաբար ոգեկոչեցինք 1918ի հերոսամարտը եւ խոնարհեցանք Հայաստանի անկախութեան հրաշալի խորհուրդներուն առջեւ:

Աւելի քան 70 տարի, Մայիս 28ի հանդիսութեանց առիթաւ քսինք եւ կրկնութեան զեով շեշտեցինք որ՝

ա- 1918ի Մայիսեան դիւզակամարտին յաղթանակեց հայութեան գայտուելու կամքը, Մարդարագատի դաշտին վրայ շահեցանք համաժողովրդական ու յարաստե պայքարի վրայ մեր դրած գրաւը եւ առաջին քունքը կանգնեցուցինք փանրութիւն ծաւալապաշտութեան դէմ:

բ- Հայաստանի Հանրապետութեան հռչակումով, գրուած ժողովուրդի իրավիճակէն բարձրացանք ազգի, բաշտեցինք եւ պետականութեան մակարդակին:

գ- 1919ին սրբեզրուած «Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստան» բանաձեւումով պահուեցաւ հայ ազատագրու-



կան պայքարը եւ իմնամարը դրուեցաւ մեր ազգային պահպանութեան:

դ- 70 տարի շեշտեցինք վերջապէս, որ 2 1/2 տարուան կարեւորե կեանք ունեցող Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ հիմք եւ կուսանը հորիզոնային Հայաստանին:

70 տարի Հայաստանի մեր ժողովուրդը տառապեցաւ հորիզոնային վարչակարգին տակ, բայց դժուարին պայմաններուն մէջ իսկ էար առ էար վերաշինեց ու ծաղիկեցուց մեր հայրենիքը՝ հայտ շինարար ոգիով եւ վերապրելու հօգը կամով: Տակախն, հայրենիքի վերաշինութեան աղբիւրը՝ հայ ազատասէնք հոգիներուն մէջ անմար մնաց անկախութեան սէրը եւ ազատութեան երազը:

70 տարի քսինք, որ խորհրդայնացած Հայաստանը հայ ժողովուրդի պետականութեան եւ Հայ Դատի մեր պայքարին կարեւորագոյն պատուանդանն է, որ վարչակարգերը գնայուն են բայց հայրենիքը՝ մնայուն:

Ընենք, որ անպայմա՛ն սյուսի գայ օրը, երբ միջազգային բարեկապատ պայմաններուն բերումով եւ հայ ժողովուրդի յարաստե պայքարին շնորհիւ՝ պիտի վերատիրանանք մեր անկախութեան:

Եւ, դէպքերու բերումով, մեր փայտալից երազը իրականացաւ ապաստածէն շատ աւելի կարն ժամանակի մէջ, հորիզոնային Միութիւնը փոյ եկաւ եւ Արցախի պահանջատիրութեան շուրջ բոլորուած հայրենի ժողովուրդը միասնական պայքարով վերատիրացաւ իր անկախութեան եւ ազատութեան:

1918 Մայիս 28ին Թիֆլիսի մէջ հռչակուեցաւ հայկական իշխանութեանց հաստատումը 11 հազար էառ- էյմ հազարան մը վրայ, շրջապատուած բշնամի կամ ոչ-բարեկապաղ գրագիներով, գրեթէ կիսով բնակուած ներքին բշնամի տարրերով, արխանաճոմ հայութեամբ եւ հայգայում տնտե-

#### ՀԻՐԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵԼՈՅԹ

#### ՀՀ ԱՐԵՎԵԼԻ ԴԵՍՊՈՒՆԱՏԱՆ ՄԻՉ

ՀՀ Արևելի դեպատմատան նախաձեռնութեամբ, շարք 28 Մայիս 1994ին կէսօրուն ժամը 2ին հիւրաւորութեան եղյայ մը տեղի ունեցաւ Փարսիքա 48ի վրայ գտնուող դեպատմական յարկին մէջ, գաղութի կրօնական, բարեխրական, մշակութային ու մարզական կազմակերպութիւններու ու միութիւններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

Բացումը կատարուեցաւ քեմակալ առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Ալվագեանի գլխաւորութեամբ տեղի ունեցած եկեղեցական կարն արարողութեամբ, որմէ յետոյ՝ ՀՀ դեպատմատան գործերու ժամանակաւոր հաստատումաւոր Աշոտ Յովակիմեան խօսք աւանդով նշեց Մայիս 28ի ազգային ու պետական օր հռչակուած ըլլալու պաշտօնական հանգամանքը ու այդ առիթով ալ, Յունաստանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հիւրաւորութեամբ մը նշումը՝ դեպատմական յարկին տակ: Իր խօսքին մէջ, ներկայացուց հան ներկայ գտնուող Հայաստանի փոխադրական նախարար Չեմրիկ Բոչինեանը եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան արտաքին յարաբերութեանց բաժնի Արեւելեան Եւրոպայի ու Պարսկաստանի երկիրներու պատասխանատու Վալերի Միրաումեանը: Հաստատումաւոր յայտնեց նաեւ, որ մօտ 10 օր վերջ Արևելի ժամանեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վահան Փափագեանն ու Յունաստանի մօտ Հայաստանի իրազօր դեպատմ Արման Կիրակոսեանը:

Յաջորդեց հիւրաւորութիւնը:

Հիւրաւորութեան ընթացքին առիթ ունեցանք խօսելու պ- պ Չեմրիկ Բոչինեանի ու Վալերի Միրաումեանին հետ: Անոնք Յունաստան ու Կիպրոս գտնուած են յուսանակ ընկերութիւններու հետ շիտամեր հաստատուելու եւ Հայաստանի երկարագոյն ու ներքին փոխադրութեան խնդիրներու շուրջ ծրագրերը բնեղաւ ու ընդունելու համար: Աւելին, Եւրոպական միութեան «TACIS» ծրագրին գծով համակարգում ու տրամադրում միջնակական օժանդակութեան ծրագրերին ներառուելու նպատակով: Իրենց վկայութեամբ յայտնաւորուած ծրագրերը կան, որոնցմէ կրնայ նպատակաւորաւ Հայաստանը: Երկու անձնաւորութիւնները արագ այցելութիւն մըն ալ տուած են Կիպրոս, ընդունուած են Կիպրոսի հանրապետութեան նախագահ Կուսէս Բիթիսիոսէն, առիթ ունեցած են փոխ գործակցութեան համաձայնագիր մը ստորագրելու եւ խօսելու Կիպրոս - Հայաստան փոխադրական փոխ գործակցութեան ծրագրերու իրականացման համար: Ընդգծելի է, որ բնեղաւրած է տակալին Երեւան - Արևել - Պէրսիք ներկայ օդանաւային գիծին մէջ ներառուել Կիպրոսը եւ մօտ ապագային այս բոնիքին մաս կազմող օդանաւերը վայրէջք պիտի կատարեն նաեւ Կառնախայի օդանաւակայանը՝ հոնիկէ ալ դէպի Հայաստան նամբարդներ ընդունելու համար:

սութեամբ կարն բանաձեւումով մը, 11 հազար էառ- էյմ տարածութեամբ դժոխային բանտ մը:

Սակայն 2 1/2 տարուան ընթացքին, հայութիւնը յաջողեցաւ կերտել շուրջ 60 հազար էառ- էյմ տարածութեամբ գրեթէ միասարք հայրենիք, պետական բոլոր կառոյցները ոտի կանգնեցան, ժողովրդավար կարգեր հաստատուեցան, Հանրապետութիւնը միջազգային ճանաչում ստացաւ ու Արևելի խորհրդածոյնին ներկայացաւ որպէս իրիտա անդամ մեր խոյական դաշտերը վերածաղկեցան եւ հայ արեւաստուրին մարտին ճայր կրկին հնչեց արեւաստուրններուն մէջ վերջապէս՝ հայութեան այլամեծ հաստատմանը հետզհետէ խմբուեցան «մէկ ազգ, մէկ հայրենիք» նշանաբանին շուրջ:

Հաջոքի համագոր այս իրագործումները յայրենիքի բէ սրտատնտեմի մէջ) միասնական կեցումով համախորտեցաւ պետութեան շուրջ, իսկ օրուն դեկալարութիւնը կրցաւ համահայկական գիտակցութիւն եւ ոգի ներշնչել իր ժողովուրդին:

Մայիս 28ին 70 տարի հոմ անկախութեան տիրացանք՝ 1918ի օրերուն բաղդատուած աւելի նպատատուր պայմաններու մէջ: Չիլոյ է ահշու շտ, որ արցախեան պայքարը եւ բուրբ - ազգրի շրջափակումը այսօր ժամը կը կշռեն հայրենի արդէն իսկ հայգայում տնտեսութեան վրայ, բայց պէտք չէ մոռնալ, որ հայկական նորաստեղծ պետութիւնը ժամանակեց գիւղատնտեսական եւ նարսարարութեան կարեւոր ներկաւորոյց մընաե՛ 1990ին Հայաստան հասած էր գիտական եւ մշակութային նախաձեռնի մակարդակի՝ հորիզոնային Միութեան մնացեալ

(Շար- 4րդ էջ)

Հայաստանի Հանրապետութեան 76-ամեակի տօնակատարութիւնը Համագայիկի շրջ վարչութեան կազմակերպութեամբ՝ տեղի ունեցաւ երէկ երեկոյեան Արևելի «Վերթան» քաղաքարահին ներս երեկոյեան ժամը 7-30ին, բերնէ-բերան լեցուն բազմութեան մը ներկայութեան, որ անկախութեան իր անմար գաղափարները վերանորոգելու ու խոսով փութացած էր տօնակատարութեան, իր ժողովուրդի հարագատ պատգամներուն ունկնդիր, անկախութեան մշտանորոգ աւիւնէն ներշնչուելով:

#### ԸՆԿԵՐ ԱՐԱ ՄԱՆԿՈՒՅԵԱՆԻ ԽՕՍԻԸ

Հանդիսութեան նախագահող ընկեր Արտ Մանկոյեան պատմական անփոփ անկնարկէ մը յետոյ անընդարձաւ Մայիս 28ի անկախագարձային րուական մը ըլլալու հանգամանին, մէջբերումներ կատարելով հայ բանաստեղծներու հերոսածմերէն: Նկարագրեց 1918ի օրերուն տիրող մթնոլորտը եւ բաղդատակները ըրաւ 1918ի պատերազմին եւ մեր օրերուն Արցախի մէջ շարունակուող հերոսապատումին, «օրովհետեւ այսօր ալ կան Համագայրներ, բայց կը կոչուին Բեկոր - Աշոտ: Այսօր ալ կան Նոգեճներ, բայց կը կոչուին Մեղրեան Շահէն: Մասունքը կը երկի, Լաչինը է այսօր: Չկրնանք էր Երկի, Շահին այսօր» բնաւ ան: Ապա խօսեցաւ Սիիւսի պարտաւորութիւններու, այլեւ իրաւունքներու մասին, որոնք կը խտանան Եւրոպայի ազատասէնք գաղափարի խորհուրդով - «Այսօր կըր Եւրոպայը վերադարձած է իր բնական միջավայրին՝ մեր շեք ուզեր գրկուածի վիճակին մատուցել: Եւ կը յասանք, կ'անկեղեցներ, կը պահանջենք - երկէ կ'ուզէր, որ մեզմ չկուր Եւրոպայով ներշնչուելու միտքաբար իրենն ու իրաւունքը»: Նայն ոգիով, ան շարունակելով իր խօսքը ըսաւ - «Ար», մնէր կ'անկեղեցներ որ Հայաստանը շրջայ միայն Հայաստանի բնակիչներուն հարկերէր, այլ գլխաւոր «Հոմ Հայրենիքը բուժանդակ Հայրենեան»:

(Օրուն նախագահին խօսքը ամբողջութեամբ կը հրատարակուի (Շար- 4րդ էջ)

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐԶ

(Շաբ. Ա. էջէն)

տարակնէ մեր չորեքշաբթի օրուան թիւով):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԸ

Իր խորամարտ պրն. Մկրտիչ Գրիգորեանի ղեկավարութեամբ Համազգայինի «Յակոբ Փափագեան» երգչախումբը յաջողապէս մեկնարանեց Գ. Միւնիի «Վո՛ւշ - Վո՛ւշ» Կոմիտասի «Գութաներգ»-ը եւ «Շողիք ձան»-ը:

Կարծէ նշել, որ հակառակ այն իրողութեան որ այս անգամ այ երգողներու թիւը նուազած տեսանք, այնուամենայնիւ երգչախումբի յաջող ելոյթներէն մէկը եղաւ իր համաշափութեան, ուժակամութեան, մանաւանդ իր հարստար գունաւորումներու ու ելեւեջներուն պատճառաւ:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՂՉՈՅՆԻ ԽՈՍԻՔ

Ազգային վարչութեան անուանով Անկախութեան տօնը ողբունեց իր առեւտրային եղիա ձախագիծեր որ վեր առաւ 28 Մայիս 1918ի պատմական արժէքը: «Մայիս 28ի շունչը եւ ոգին գրաւեր եւ տիրապետեր էր հայու սիրտը: Պողոստեանայ հասարակութիւնը էր անոր կամքը, հասարակ շոր յայ էր սիրտը իր հոգիին մէջ»:

Իր խօսքը կերպովանցնելով նոյն հաւատով տոգորուած Ղարաբաղի ժողովուրդի կամքին, վեր առաւ կուռ ու նահատակուող ժողովուրդին գիտակցութիւնը գահաբեկութեան ճամբով յաղթանակներ ապահովելու իրողութեամբ, որպէսզի Արցախի խնդիրը իր բարւոյ յաջողութեամբ հասնելէ վերջ՝ «ձեռք - ձեռքի տուած բախիչ զէպի յուսաւոր ապագան, զէպի ամբողջական երազներու իրականացում, զէպի Միացեալ եւ Անկախ Հայաստանի կերտումը»:

Հ. Յ. Դ. ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆԻ ԽՈՍԻՔ

Հ. Յ. Դ. երիտասարդականի ուղերձը կարգաց ընկեր Բրիտանապոր Ամիրպեան՝ նշելով որ մեր օրերուն դարձեալ ժողովուրդը արեան տուրբ վնասելով կը պարտադրուի: Երեկ Սարտարապատ, Ղարաբիխէ եւ Բաշ Աբարան, այսօր Արցախ: «Պատմութիւնը կը կրկնուի, անկի ճիշդ կը շարունակուի»:

Յանձնառու երիտասարդութեան անուանով՝ շեշտեց որ «հայ երիտասարդները արթուն կը ժամն ու տեր կը կանգնին հայրենի տունը իրաւունքներուն»: Իսկ որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Յունաստանի երիտասարդական միութիւն, որպէս ժողովուրդը իր հայրերու հաւատքին, սրտանց կ'ոգնուի, անկախ Հայաստանի Հանրապետութեան 76րդ տարեդարձը, անգամ մը եւս վստահեցնելով թէ միշտ եւ ամէն տեղ հայ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան, սրբազան պայքարի առաջին գիծերու վրայ պիտի գտնուի»:

«ՍԱՍՈՒՆՅԻՆԵՐՈՒ ՊԱՐԸ»

Օրուան յայտագրին՝ ամուսնեմով հանդէս եկաւ երիտասարդականի անդամ ընկերուէի Իսկաչի Մազմանեան, Գեորգ Կիսիկի «Սասունցիներու պար»-ը ոգեւորելով հերոսածիր մեկնարանումով: Համարձակ ու խորտո շեշտաւորում եւ յստակ առաջանութեամբ իր ամուսնեմը գնահատուեցաւ բոլոր ներկայներէ: Եւրոպականացի խանդավառ ծափաջոխներու: ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԽՈՒՄԸ

Տօնակատարութեան աւարտին, Համազգայինի միայն իգական անդամներու կողմէն պարախումբը՝ երկու յաջող պարերով հանդէս եկաւ, յաւապէս տպաւորելով ներկայները իր համաշափ շարժանքներով, մաւր արտայայտութիւններով ու գեղեցիկ տարագներով: Պարուսուցութիւն՝ Թորոս եւ Իլիքա Ալեքիբեաններ:

ՓԱԿԱՆ ԽՈՍԻՔ

Օրուան նախագահ ընկեր Արա Մանկոյեան հանդիսութեան իր փակման խօսքը խոստացուց հետեւեալ մտքերուն մէջ - Տկար կը զգամ իմ սեփական խօսքերով արժանաւորապէս փակելու այսօրուայ հանդիսութիւնը:

Հերոսներու օրն է այսօր, Սարտարապատի, Բաշ - Ազարանի ու Ղարաբիխէի հերոսներուն օրը:

Եւ օրը անոնց արժանաւոր գաւակներուն՝ Արցախի ազատամարտիկներուն:

Ուստի կ'ապախիմիմ Աւետիս Ասարունեանի գրչի հգօրութեամբ՝ «Եւ այժմ ո՛վ հոյակապ, ու խուռած հսկաներ, Ազատութեան խորանին առաջ ծննդաբեր՝ Չեզ եմ նուիրում Ձեր արիւնով ցօղում այս կարմիր երազները: Եւ Չեզ, ո՛վ անանուն ու կորած մարտիկներ, յուս անտատում եւ մտայն ճարտար ընկած հերոսներ, որոնց վերջին հաւաքանքները մրրիկների հետ են տարուում, որոնց սուկորները հողմերն են լիզում հեծեծալով: Չեզ բոլորիդ, պաշտամունքի եւ հիացումների արցունքով եւ Չեզով այն արիւնների գաղափարին, որին այնքան սերունդներ փարեղ են խանդաղատանով եւ օր ահա Ձեր շնորհիւ փայլիմ եւ մեր մտայն հորիզոնի վրայ: Փա՛ռ ո՛վ Չեզ:



ԽՆՃՈՅՔ - ԽՐԱԽՃԱՆԻ ԶԻՔՍԻ ՄԷՋ

Դրօշագարդուած ու օրուան խորհուրդը յատկանշող եւ մարգարայտի մէջ գետնուած մեծալիք պատասխաններով տօնական մթնոլորտի մէջ շունչեցաւ Մայիս 28ի տարեդարձը Յիւլի 2. Յ. Դ. կոմիտէի կողմէ, Հ. Մ. Ը. Մ. Ի բաց մարգարայտը:

ԸՆԿԵՐ ԲԵՆՕ ԹՈՂՈՒԵԱՆԻ ԽՈՍԻՔ

(Շաբ. Ա. էջէն)

Երկիրներուն բաղդատում՝ Հայաստանի բնակչութիւնը ամէնամիատարրն էր 1988ին, իսկ այսօր գրեթէ յիս միատարր է պէտք է յիշել մանաւանդ, որ հայ պետականութեան տարակայման համար այսօր անփոխարինելի կռուան է Սիիւսեր՝ կազմակերպուած եւ բարգաւաճ գաղութներով, տնտեսական, գիտական եւ մասնագիտական մեծ կարեւորութիւններով պէտք է շեշտել վերջապէս, որ միջ - պետական յարաբերութեանց մարզին մէջ, Հայաստանին դրացի թէ հեռուոր բազմաթիւ պետութիւններ հետաքրքրուած են Հայաստանի հետ գործակցութեամբ:

(Շաբու Նակիկի)

տէն ներս, ժողովուրդի ու երիտասարդ - պատանիներու մասնակցութեամբ:

Օրուան բացումը կատարեց ընկեր Խաչիկ Կարինեան իր մտածումները ամփոփելով հետեւեալ կէտերուն մէջ -

ԸՆԿԵՐ ԽԱՉԻԿ ԿԱՐԻՆԵԱՆԻ ԽՈՍԻՔ

Այսօրուան նման, ճիշդ 76 տարի առաջ, Բաշ Ապարանի, Սարգարապատի ու Ղարաբիխէի ճակատներուն վրայ, հայ ժողովուրդը իր անկախութիւնը կերտելով կարողացաւ հիմնել պետականութիւն մը, որու շարունակութիւնը կը նկատուի այսօրուայ Հայաստանի Հանրապետութիւնը, ինչու չէ՞ նաեւ Առնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, իր պետական բոլոր կառույցներով: Անշուշտ այս պահուս պիտի յիշուի՝ ըլլայ Հայաստանի Հանրապետութեան, ըլլայ Արցախի ազատագրման ու պաշտպանութեան գլխաւոր գործին մէջ դեր ունեցող կազմակերպութեան մասին, որովհետեւ դուք այ ինչպէս համաձայն է՞ թէ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իր հազարաւոր համակիրներով ու շարքայիններով է՞ ու կը մնայ այն անմրցակից միակ կուսակցութիւնը ու ամէն բանէ գերադաս համարելով հայ ժողովուրդին շահերը կը շարունակէ պայքարի մը դարաւոր թշնամիին՝ Բուրժու Բրքազեցի շարժարար ու ծաւալապաշտ պետութեանց դէմ:

Վերջապէս, ձեր նկատողութեան կը յանձնեմ թէ որպէս կուսակցութիւն, այսօրուան խնդիր տեղի կ'ունենայ ինչպէս աշխարհի բազմաթիւ վայրերուն մէջ, ոչ միայն Մայիս 28ի յաղթանակը տօնելու, այլ նաեւ հազարաւոր հերոսներուն համար, որ աւելի քան 100 տարի կը քայլեն Բրիտանապորներու, Ռոստոմներու ու Չաւարեաններու գծած համբէն, բոլոր անոնց համար՝ որոնք ազատագրեցին Արցախը, անոնց համար՝ որոնք մեզի նման կը տօնեն Մայիս 28ի յաղթանակը:

1988ին Ստեփանակերտի մէջ Ազատութեան բողոքում կրակը արագօրէն տարածուեցաւ Արցախի բոլոր անկյունները եւ Արցախի ժողովուրդի մզած պայքարը իր դրական արդիւնք տուաւ: Շնորհիւ այդ հերոսներուն՝ կարեղ եղաւ կապի Արցախը Հայաստանին խաչին մարդասիրական միջանցեմով կարեղ եղաւ ապահովութեան գօտի մը ստեղծել Արցախի ու Հայաստանի շուրջ ու եկան փաստելու մեր թշնամիին, որ եթէ պէտք է հայերը կրնան խօսիլ նաեւ իրենց լեզուով:

Յաջորդաբար ուրախ մթնոլորտի մէջ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր՝ ազգային, յեղափոխական ու հայրենասիրական երգերու մեկնարանումով: Նախ թեմ երաւիրուեցաւ ընկեր Տիգրան Ալիւման, որ կիթառի ընկերակցութեամբ Յովհաննէս Սամուէլեանի յեղափոխական երգերու շեշտ մը տուին: Ապա՝ Մկրտիչ Պողոսեան կիթառի, Աննա Երզրարեանի դաշնակի, Սամուէլ Թովմասեանի փուսնիչայի, Վարուժան Մկրտիչեանի աւորտուէնի եւ Յակոբ Աւագեանի թմբակի ընկերակցութեամբ նուազախումբը երգեց ու նուագեց հայրենասիրական երգեր, բարձր տրամադրութեան տակ պահելով ներկայներուն տրամադրութիւնը որ մերը կ'արտայայտուէր խմբապարերու դրսեւորումով:

ԽՆՃՈՅՔ - ԽՐԱԽՃԱՆԻ ԳՈՒԲԻՆՈՅ ՄԷՋ

Ուրախ մթնոլորտի մէջ, «Չաւարեան» կեդրոնի դալար պարտէզին մէջ՝ խրախուսեմով նշուեցաւ Մայիսեան Անկախութեան տարեդարձը ժողովուրդի ու երիտասարդութեան մասնակցութեամբ:

Օրուան իմաստին շուրջ պատշաճ խօսքով հանդէս եկաւ ընկեր Թագուր Յովակիմեան, որ իր մտածումները խոստացուց հետեւեալ գաղափարներու մէջ:

ԸՆԿԵՐ ԹԱԳՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ ԽՈՍԻՔ

Իրախոսեմին մը հանդիսավարութեան նեղ ժամանակը օգտագործելը, պատմական ակնարկ եւ կամ բազաւական վերլուծում կատարելու համար անկախութեան նախորդող, անկախութեան ընթացքին եւ կամ անոր յաջորդող խորքերը յայնի կարգերով շուրջ 70 տարի երկրի կառավարման՝ բնական է որ ինձինս անհեղինակ է: Ներկայիս Հայաստանը կրկին անկախ է: Անկախութիւն մը՝ որ նուանեցին առանց պատերազմի, իբր հետեւեալ հորիզոնային Միութեան փլուզումին, Մայիսեան Անկախութեան հողային տարածքին վրայ: Անկախութիւն մը որ նուանեցին երկու հանգրուանով սկսելով 1918ի Մայիսէն, առկայուեցաւ 70 տարուայ համար խորհրդային վարչակարգէն եւ հասանք երկրորդ հանգրուանին 1991 Մեպտեմբերին:

Թէեւ տարբեր պայմաններու տակ տիրացանք մեր օրերու անկախութեան, սակայն մեր երկրի ներքին կազմութիւնը 1918ի շրջանին տիրող թշուառ կազմութեան շարունակութիւնն է:

Ազատութիւնը, անգործութիւնը, ազերիներու կողմ շրջափակումը, վարեղանիքի չզոյսութիւնը, անտանելի կացութիւն տեղեւծ են հայրենիքէն ներս: Բնութիւնը իր կարգին անզոգ հարուածներ կը տեղացնէ մեր ժողովուրդի գլխուն՝ երկրաշարժով, ծանր ձմեռներով փորձելով ամբողջացնել փորձանքներու շարքը: Ասոնց կողմին եւ աւելին Արցախի ճակատը, հայ - ազե-

Փոհան ԾԱՂԿԵՊՍԱԿԻ  
Հրաչ Եաղու պեանի  
մահուան առթիւ կը նուիրեն -

Տէր եւ տիկին Արմենակ եւ Ալիս Աւետիսեան «Ազատ Օր»ի ֆոնտին 5000 տրխ:

Փոհան ԾԱՂԿԵՊՍԱԿԻ  
Վեհանոյշ Ռունեանի  
մահուան առթիւ կը նուիրեն -

Տէր եւ տիկին Կարպիս եւ Մաքրուի Պատանեան «Ազատ Օր»ի ֆոնտին 5000 տրխ:

ՄԱՅԻՍ 28Ի

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

ՈՏՆԱԳՆԴԱԿԻ ՄՐՅՈՒՄ



կազմակերպուած՝  
Յունաստանի Հ. Մ. Ը. Մ. Ի շրջ. վարչութեան կողմէ  
Միջ - մասնաբաժնային ուսնագնդակի մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն Հ. Մ. Ը. Մ. Ի ուսնագնդակի փոքր ու երէց մարզիկները:  
Մրցումները տեղի կ'ունենան Գոթիմիոյ Նիքայի մարզադաշտին մէջ (Նիքիօ Քրաքիօ) կիւսնագնդակի կից, երկուշաբթի 30 մայիսի երեկոյեան ժամը 6ին:  
Կը հրաւիրուին բոլոր վարչութիւններն ու միութիւնները, ինչպէս նաեւ յարգող հասարակութիւնը:  
Վարչութիւն

րի պատերազմը: Հոն ուր մեր «սրբազան խենթերը» տեղատարաբ ուրակնծումներու պատասխան տալու համար՝ հերոսական հակապարսկազգականի անցնելով չեզոքացուցին թշնամիի կրակակէտերը եւ յառաջանալով Արցախի բոլոր տարածքներէն դուրս էջեցին ազերի զօրքը եւ բնակչութիւնը, իրենց յաջողութիւնները շարունակելով նաեւ ստորվեհանական հողին վրայ: Մեր նորագոյն հերոսներուն՝ Արցախի ազատամարտիկներու արարքներու իբրեւ հետեւեալ, արդէն իսկ նուանած են Անկախութեան մեր երրորդ հանգրուանը՝ Արցախի Անկախութեան, որու պաշտօնական նանաչումը Բաղաւական միջազգային հաշիւներուն իբր հետեւեալ կրնայ ուշանալ:

Կասկածէ վեր է, անշուշտ երբ բոլորս կ'անդրադառնանք որ կազմութիւնը յայտը եւ նակտագրական է Հայաստանի եւ Արցախի մէջ: Բոլորս մտահոգուած ենք Հայրենիքի եւ Արցախի ապագայով: Հասկնալի է, որ Արտերիքէն հասած նիւթական օգնութիւնը որքան այ մեծ ըլլայ պիտի չկարենայ գոհացնել Հայրենիքի պահանջները եւ առժամայն յուսումներ կրնայ տայ միայն: Ներքին դժուարութիւններուն առընթեր խորհրդային վարչակարգի 70ամեայ գոյութիւնը երկրէն ներս իր հետեւերը ձգած է ժողովուրդի եւ ղեկավարութեան մտածելակերպին վրայ: Սակայն պատմութիւնը վկայ որ հայ ժողովուրդը զիտ ապրիլի եւ գոյատեւել թօրափելով իր վրայ նեղող բոլոր դժուարութիւնները: Այս մէկը կը վկայէ նաեւ յաղթանակի հայրը Ռիխարդ 2րդի կողմէ կը յայտնէ որ հայրեր, յոյներ եւ հրեաները այն երբէ մեծ ժողովուրդներն են որ ապրելու եւ գոյատեւելու բացառիկ ուժը ունին իրենց մէջ:

Պիտի ապրինք, պիտի գոյատեւենք նուանելու համար Մայիսեան Անկախութեամբ սկսած անկախութիւններու նորագոյն հանգրուանները, Մուշի, Վանի, Կարսի, Արտասանի ազատագրմամբ եւ միացեալ անկախ եւ հզօր Հայաստանի մը ամբողջացումով:

Ապա Պարոյր Սեւակի «Բիչ եմ բայց հայ եմ»-ը ապրումով արտասանեց տիկին Վարդ Մազմանեան:

Օրուան գեղարուեստական յայտագրին իր մասնակցութիւնը բերաւ պրն. Կարօ Պարտաբեան՝ սինթեսայզրի ընկերակցութեամբ ու ազգային - յեղափոխական երգերու ու նուագներու մասնակցութեամբ ուրախ մթնոլորտ մը ստեղծելով, որմէ խանդավառուած մեր պատանի - երիտասարդները խմբապարերով իրենց բարձր տրամադրութիւնները արտայայտեցին:

ԽՆՃՈՅՔ - ԽՐԱԽՃԱՆԻ ԹԵՍԱՂՈՒՆԻԿԻ ՄԷՋ

Շաբաթ, 28 մայիսի երեկոյեան, Թեսաղոնիկի «Վ. եւ Վ. Տէր Չաւարեան» սրահէն ներս Հ. Յ. Դ. երիտասարդական միութեան «Սողոմոն Թեփիլեան» խումբին կողմէ խնդր - խրախուսեմ մը կազմակերպուեցաւ օրուան պատշաճ յայտագրի գործադրումով: Օրուան հանդիսավարի ղեկով ընկերուէի Սեղա Ղազարեան բացատրեց Մայիսեան Անկախութեան իմաստն ու խորհուրդը, սպա հրաւիրեց ընկերուէի Ռոզա Թէրզեանը որ յունարէն լեզուով արտասանեց Պարոյր Սեւակի «Սարգարապատ» բարգմանուած հերոսածր: Ապա ընկերուէիները Նուայր Ղալիլեա եւ Միքիլա Շիրակեան արտասանեցին Գ. Քալափիսի ծանօթ «Խրախ» հերոսածր:

Երիտասարդականի անդամներուն կողմէ բառերական բնականացումով ներկայացուեցաւ Ազգային խորհուրդի նիստը, Անկախութեան նախօրեակին, ինչպէս նաեւ Սողոմոն Թեփիլեանի դատավարութեան հատուած մը: Յաջորդեց հիւրախորհրդի:

Կիրակի առաւօտ, Բաղախի ս. Աստուածածին եկեղեցույ մէջ, բաղային խորհուրդի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ գոհարանական մաղթանք, որու ընթացքին պատարագեց Գեղամ վրդ. Խաչիբեան: